

Շնորհավոր Ամանոր 2 և Մուրբ ծնունդ

Ամանորյա շնորհավորանքին ուղում ենք հավելել մեր մաղթանքը կամ հորդորը ձշմարիտ հայ մարդուն՝ ի վերջո ա-կանջալուր լինել Մեծն Չարենցի՝ իրեն ուղղված պատգամին՝

«Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»



ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ



«Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցությունն անչափ կարևոր քայլ է. ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյան

Ս.թ. նոյեմբերի 24-ին Մեծրոպ Մաշ-տոցի անվան Մատենադարանում տեղի ունեցավ Եվրոպական միության «Հորիզոն Եվրոպա» ծրագրի և EURAXESS-Հայաստան պորտալի շնորհանդեսը, որը կազմակերպել էր Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոնը՝ ՀՀ գիտության կոմիտեի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Եվրոպական հանձնաժողովի հետ համագործակցությամբ:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը իր ողջունյի խոսքում նշեց, որ անչափ կարևոր քայլ է «Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցությունը, որն արդյունք է բոլոր շահագրգիռ գերատեսչությունների համաձայնեցված և նպատակային գործունեության: Նա շնորհակալություն հայտնեց գործընթացում ներգրավված բոլոր կողմերին՝ Եվրոպական հանձնաժողովին, Հայաստանում Եվրամիության պատվիրակությանը, Հայաստանի պատասխանատու գերատեսչություններին՝ գործընթացին ցուցաբերած աջակցության և արդյունավետ համագործակցության համար:

«2016 թվականից Հայաստանի գիտահետազոտական կազմակերպությունները հնարավորություն են ունեցել մասնակցելու մալմարդ «Հորիզոն 2020» ծրագրին, և գիտականությանը պետք է նշեն, որ Գիտությունների ազ-

գային ակադեմիայի ինստիտուտներն ամենակատարյալ մասնակցություն են ցուցաբերել: Համոզված եմ, որ ասոցացումը նոր՝ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին թույլ կտա օգտագործել արդեն ձեռք բերված փորձն ավելի ակտիվ և նպատակային մասնակցություն ցուցաբերելու համար: «Հորիզոն Եվրոպա» ծրագիրը շատ մրցակցային է, և պատշաճ մասնակցության համար հայաստանյան կազմակերպությունները պետք է իրականացնեն համաշխարհային մակարդակի գիտական հետազոտություններ, հազցված լինեն համապատասխան բարձրակարգ սարքավորումներով, իրականացնեն ակտիվ միջազգային համագործակցություն՝ ունենալով առաջատար մասնագետներ: Համոզված եմ, որ Գիտության ոլորտում դրական միտումները և ֆինանսավորման նախատեսված զգալի բարձրացումը, նոր ծրագրերի իրականացումը, գիտամոտարարական ոլորտի միջազգայնացմանն ուղղված քայլերը կարող են ապահովել դրական արդյունք և մասնակցության ավելի բարձր ցուցանիշներ», - ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Հրանտ Մաթևոսյանը իր ելույթում ասաց, «Գիտությունը սահմաններ չի ճանաչում, և միջազգային համագործակցությունը գիտական քաղաքականության կարևոր ուղղություններից պետք է լինի: Գի-

տությունների ազգային ակադեմիան մեծ կարևորություն է տալիս Գիտության միջազգայնացմանը և միջազգային համագործակցությանը: «Հորիզոն 2020» ծրագրին Հայաստանի ասոցացումից հետո ակադեմիան միացել է Եվրոպական «Եվրաքսես» (Euraxess) նախաձեռնությանը և Չեռնարկությունների Եվրոպական ցանցին: «Եվրաքսես» - Հայաստան նախագիծն ուղղված է միջազգային գիտատեխնոլոգիական համագործակցության խթանմանը և Գիտ-

նականների առաջխաղացմանը»:

Միջոցառման մասնակիցներին ողջունեցին Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարությունների գլխավոր տնօրինության տնօրենի տեղակալ Սինե Ռաջոն, ՀՀ կրթության, Գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը, ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոյանը:

Միջոցառման միտմերի ընթացքում զեկույցներով հանդես եկան հայաստանյան և արտասահմանյան մասնագետները, որոնք ներկայացրին «Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի ասոցացման և միջազգային համագործակցության հնարավորություններն ու հեռանկարները:

«Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի ասոցացման համաձայնագիրը ստորագրվել է ս.թ. նոյեմբերի 12-ին: Ծրագրի շրջանակներում Հայաստանի կազմակերպությունները հնարավորություն կստանան մասնակցելու «Հորիզոն Եվրոպա» ծրագրի մրցույթներին, ինչպես նաև հանդես գալու որպես նախագծերի համակարգող: «Հորիզոն Եվրոպա» ծրագիրը նախատեսված է 2021-2027թթ. համար: Մոտ 95 միլիարդ եվրո ընդհանուր բյուջե ունեցող ծրագիրը համաշխարհային մակարդակով ամենածավալուն գիտահետազոտական ծրագիրն է, որը համաեվրոպական համագործակցային գիտահետազոտական նախագծերի ֆինանսավորման հիմնական գործիքն է:

2019 թ.-ին ՀՀ ԳԱԱ-ն միացել է EURAXESS համաեվրոպական նախաձեռնությանը, որի շրջանակներում ստեղծվել է EURAXESS-Հայաստան պորտալը, որում ներգրավվել են երևանի պետական համալսարանը, Երևանի պետական բժշկական համալսարանը և ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոնը: EURAXESS ցանցը գիտնականներին մատուցում է տեղեկատվական և օժանդակ ծառայություններ, աջակցում է գիտնականների տեղաշարժին և կարիերայի զարգացմանը՝ միաժամանակ հնարավորություն ստեղծելով ընդլայնելու գիտական համագործակցությունը անդամ-երկրների և աշխարհի միջև:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն





ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը մշակում է Երկրի հեռագնման տվյալների և վեբ-ԱՏՀ գործիքների կիրառության նոր մոդելներ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի գեոինֆորմատիկայի լաբորատորիան մշակում է Երկրի հեռագնման տվյալների և վեբ-ԱՏՀ (աշխարհագրական տեղեկատվական համակարգեր) գործիքների մի շարք ոլորտներում կիրառության նոր մոդելներ:

Երկրի հեռագնման տվյալների և վեբ-ԱՏՀ գործիքների հիման վրա մշակվել է մակերևութային ջրային ռեսուրսների որակական և քանակական փոփոխությունների գնահատման մոդել, ջրհավաք ավազանում ձյան շերտի և ջրային օբյեկտների լցվածության միջև կապի ուսումնասիրության մոդել, կազմվել է ամսառաջին հրդեհների վտանգի գնահատման և բնական կանխատեսման համակարգի հայեցակարգային առաջարկ:

«Վերջին տարիներին լաբորատորիայի հետազոտական հիմնական ուղղությունն է երկրի հեռագնման տվյալների և վեբ-ԱՏՀ գործիքների կիրառությունները ջրային ռեսուրսների քանակական ու որակական ցուցանիշների և դրանց փոփոխությունների գնահատման, բնական աղետների վտանգի և ռիսկի գնահատման և քարտեզագրման, կլիմայական փոփոխությունների վերլուծության համար: Մշակվել են տարբեր հայեցակարգային բազմագործոն

մոդելներ, որոնք թույլ են տալիս գնահատել ջրհավաք ավազանում ձյան շերտի բարձրության և ջրային օբյեկտների լցվածության միջև կապերը, հաշվարկել գետի կամայական կտրվածքում առավելագույն, նվազագույն և միջին հոսքի ծավալը, գնահատել և կանխատեսել սողանքների ակտիվացման, քարաթափումների, ամսառաջին հրդեհների բռնկման և հեղեղումների վտանգները: Բազմագործոն ասելով հասկանում ենք, որ դիտարկվում են բնական երևույթը կամ պրոցեսը ձևավորող և դրա վրա ազդող տարատեսակ պարամետրեր՝ ռելիեֆ, երկրաբանություն, կլիմայական պարամետրեր, մակերևութային և ստորերկրյա ջրեր, հողատեսքեր և հողօգտագործում, մարդածին ազդեցություններ և այլն: Այսպիսի բազմագործոն վերլուծությունները հնարավոր են դառնում արբանյակային պատկերների, հիդրոգերևաբանական վերգետնյա մոնիթորինգի, դաշտային ուսումնասիրությունների տվյալների միջև կապերի հաստատմամբ և ԱՏՀ վերլուծական մոդելների նախագծմամբ ու կիրառմամբ», - բացատրում է ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի գեոինֆորմատիկայի լաբորատորիայի տնօրեն Ալեքսանդր Առաքելյանը:

Գեոինֆորմատիկայի լաբորատորիա-

յում՝ Գերմանիայի Հեյմհոլցի բնապահպանական հետազոտությունների կենտրոնի ու Դարմշտադտի տեխնիկական համալսարանի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն համուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ/USAID ASPIRED) ծրագրի հետ համագործակցությամբ, կատարվել է նաև Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի ձևավորման հասակի և ծագման վերլուծություն: Նոր հետազոտական մեթոդներով ստացված տվյալները վկայում են, որ Արարատյան ավազանի ստորերկրյա ջրերը ունեն խոցելիության բարձր մակարդակ մարդածին ազդեցությունների և կլիմայական փոփոխությունների նկատմամբ: «Կիսաանապատային պայմաններում արտեզյան ավազանի ջրերի տարիներ շարունակ անխնայ գերօգտագործումը, հատկապես ձկնաբուծական նպատակներով, հանգեցրել է ավազանում անշրջելի փոփոխությունների, ինչի արդյունքում բարձրարժեք ստորերկրյա ջրային պաշարների քանակական և որակական ցուցանիշների բարելավման համար կպահանջվեն տասնամյակներ: Արարատյան ավազանի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման ուղղությամբ անհե-

տաձգելի միջոցառումների ձեռնարկումն ունի կենսական նշանակություն ամբողջ հանրապետության ջրային անվտանգության տեսակետից», - նշում է Ալեքսանդր Առաքելյանը:

Երկրաբանական գիտությունների ինստիտուտի գեոինֆորմատիկայի լաբորատորիայի աշխատակիցների՝ ջրային ռեսուրսների կառավարման, աղետների ռիսկի գնահատման և վաղ ազդարարման համակարգերի մշակման ուղղություններով տարբեր տարիներին կատարված աշխատանքների արդյունքները ներդրվել են կիրառության ՀՀ շրջակա միջավայրի և արտակարգ իրավիճակների նախարարություններում:

Նշված գիտական արդյունքները ստացվել են ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի բազային ֆինանսավորման ծրագրի շրջանակներում և ՄԱԶԾ-ի, Համաշխարհային բանկի, Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության, ճապոնական միջազգային համագործակցության գործակալության, Եվրամիության և այլ դոնորների կողմից:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

«Մենք հիմա ապրում ենք մի ժամանակաշրջան, երբ քիմիան մարդկությանը պետք է առավել քան երբևէ». անվանի քիմիկոս Վալենտին Անանիկովի գիտական զեկուցումը՝ ՀՀ ԳԱԱ-ում



Ս.թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հյուրընկալեց Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Նիկոլայ Զելինսկու անվան օրգանական քիմիայի ինստիտուտի մետաղակոմպլեքս և նանոչափ կատալիզատորների լաբորատորիայի ղեկավար, Եվրոպայի ակադեմիայի անդամ Վալենտին Անանիկովին: Ակադեմիկոս Անանիկովը հանդես եկավ «Կատալիզի բազմակողմանի տեսությունը Ա.Ա. Բալանդինից մինչև մեր օրեր» գիտական զեկուցմամբ:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը կարևորեց ակադեմիկոս Անանիկովի այցը. «Ներկայումս գիտության կոմիտեի աջակցությամբ գիտությունների ազգային ակադեմիան իրականացնում է ծրագրեր, որոնց շրջանակներում Հայաստան են իրավիքներ առաջարկում գիտնականներ արտերկրից՝ դասախոսություն կարդալու համար: Մենք նաև լրացուցիչ հիմնադրամ ենք ստեղծում՝ անվանի գիտնականներին մեզ մոտ հրավիրելու նպատակով: Հարցը բնարկվել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Ալեք-



սանդր Սերգեևի հետ, ով պատրաստականություն է հայտնել խթանելու այս գործընթացը»:

ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-բարտուղար Լևոն Թավադյանը ներկայացրեց Վալենտին Անանիկովի գիտական նվաճումները՝ նշելով, որ նա համաշխարհային մակարդակի խոշոր գիտնական է, ում գիտական աշխատություններից ամենաշատն են հղումներ կատարվում քիմիայի ոլորտում: «Վալենտին Անանիկովը իրականաց-

նում է քիմիական գործընթացների տեսական ուսումնասիրություն և մոդելավորում, արհեստական բանականության կիրառություն քիմիական հետազոտություններում: Նա ստեղծել է մի շարք նանոչափ արդյունավետ կատալիզատորներ, որոնց միջոցով հնարավոր է կորզել կենսաբանական զանգվածից զանազան օգտակար քիմիական միացություններ»,- նշեց Լևոն Թավադյանը:

Վալենտին Անանիկովը բարձր գնահատեց ՀՀ ԳԱԱ-ի հետ համագործակցության հեռանկարներն ինչպես քիմիական գիտությունների, այնպես էլ մյուս բնագավառներում: «Ժամանակին



շարք ոլորտների հիմքն է, իսկ այսօր շատ արդիական է նաև մեր հակավիրուսային դեղամիջոցների ստեղծման գործում: Մեր օրերում քիմիան ամենապահանջված, օգտակար և հետաքրքիր ոլորտն է», - ասաց Վալենտին Անանիկովը:


Ակադեմիկոս Անանիկովը գիտական զեկուցմամբ հանդես եկավ նաև դեկտեմբերի 3-ին ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում:

Վալենտին Անանիկովը ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի գիտաշխատող Արփիմե Հարությունյանի և ավագ գիտաշխատող Աստղիկ Շահխաթունու կողմից ղեկավարվող «Իոնական հեղուկների մշակում և դրանց կիրառությունը քիմիայում», «Կենսաբանորեն ակտիվ միացությունների ինքնության և մաքրության վերլուծության մոր միջուկային-մագնիսական ռեզոնանսի սպեկտրոսկոպիկ եղանակների մշակում» թեմաների օտարերկրյա խորհրդատուն է:


ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՆՈՐԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ - 2021

Ֆիզիկայի բնագավառում. Նորբեյան մրցանակ շնորհվել է Կլաուս Զասելմանին, ճապոնիայում ծնված ամերիկացի գիտնական Սյուկուրո Մանաբեին և իտալացի Ջորջո Պարիզին՝ կլիմայի փոփոխությունների հետազոտությունների, երկրագնդի կլիմայի մոդելավորման, ֆիզիկական համակարգերի ուսումնասիրության համար:



Կլաուս Զասելման




Սյուկուրո Մանաբե



Ջորջո Պարիզի

Խաղաղության Նորբեյան մրցանակը շնորհվել է ռուսաստանյան «Նովայա զագետա»-ի գլխավոր խմբագիր Դմիտրի Մուրատովին և ֆիլիպինցի լրագրող Մարիա Ռեսային՝ խոսքի ազատության պաշտպանությանն ուղղված իրենց ջանքերի համար:



Դմիտրի Մուրատով



Մարիա Ռեսա

Տնտեսագիտության բնագավառում. Նորբեյան մրցանակի դափնեկիրներ են դարձել ամերիկացիներ Ջոշուա Անգրիստը, Գվիդո Իմբենսը և Դեյվիդ Քարդին՝ «ոչ գիտական հետազոտությունների արդյունքները գիտական նպատակների ծառայեցնելուն միտված մեթոդաբանության մշակման համար»: Դափնեկիրները ներկայացրել են աշխատաշուկայի վերաբերյալ մոդ տեսակետներ և ցույց են տվել, թե փորձարարական ճանապարհով ինչպիսի եզրակացություններ կարող են արվել տնտեսական գործընթացների պատճառների և հետևանքների վերաբերյալ:



Ջոշուա Անգրիստ



Գվիդո Իմբենս



Դեյվիդ Քարդի

Գրականության բնագավառում Նորբեյան մրցանակի դափնեկիր է դարձել Աբդուլազակ Գուռմա Տանգանիայից՝ «մշակույթների ու մայրցամաքների հորձանուտում գաղութատիրության հետևանքների և փախստականների ճակատագրի անգիջում և զգայական մերկացման համար»:



Աբդուլազակ Գուռմա

Քիմիայի բնագավառում

Նորբեյան մրցանակի դափնեկիրներ են դարձել Բենջամին Լիսթը Գերմանիայից և Դեյվիդ Մաքմիլանը Միացյալ Նահանգներից՝ մոլեկուլների սինթեզում կիրառվող ասիմետրիկ օրգանականատալիզի մեթոդների մշակման համար:



Բենջամին Լիսթ



Դեյվիդ Մաքմիլան

Ֆիզիոլոգիայի և բժշկության բնագավառում

Նորբեյան մրցանակ շնորհվել է մոլեկուլային կենսաբան, նյարդաբան Արտեն Փաթափոթյանին և ֆիզիոլոգիայի պրոֆեսոր Դեյվիդ Ջուլիուսին ԱՄՆ-ից՝ շոշափական և ջերմազգաց ընկալիչների ուսումնասիրության և կատարված բացահայտումների համար:



Արտեն Փաթափոթյան



Դեյվիդ Ջուլիուս

ՀՀ ԳԱԱ-ում գիտաժողովով նշանավորվեցին Ֆեոդոր Դոստոևսկու, Նիկոլայ Նեկրասովի և Գյուստավ Ֆլորբերի ծննդյան 200-ամյակները

Ա.թ. նոյեմբերի 30-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Համաշխարհային դասական գրականությունը՝ ազգային գրականությունների համատեքստում» հորեյանական գիտաժողովը՝ նվիրված Ֆեոդոր Դոստոևսկու, Նիկոլայ Նեկրասովի և Գյուստավ Ֆլորբերի ծննդյան 200-ամյակներին: Գիտաժողովը կազմակերպել է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը Ռուսաստանի Դաշնության Մաքսիմ Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի հետ համատեղ՝ ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սարգսյան իր ողջույնի խոսքում շեշտեց ՀՀ ԳԱԱ և ՌԳԱ երկու ինստիտուտների համագործակցության կարևորությունը՝ հույս հայտնելով, որ այն կկրի մշտական բնույթ: «2019 թվականը հայ ժողովրդի համար անցկացվեց երկու մեծ գործիչների՝ Զովհաննես Թումանյանի և Կոմիտաս Վարդապետի ծննդյան 150-ամյակի հոգևոր և ներքին: Հայաստանի Հանրապետությունից դուրս այս հորեյանները նշվեցին Մոսկվայում Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և Մաքսիմ Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի կողմից կազմակերպված գիտաժողովի ժամանակ: 2020 թվականին լրացավ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի և Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակը: Հայաստանից դուրս այս միջոցառումներն անցկացվեցին Սանկտ Պետերբուրգում կազմակերպված միջազգային գիտաժողովի ժամանակ: Այս տարին գիտության և մշակույթի տեսանկյունից միջազգային համայնության և մեր ժողովրդի համար նշանավորվում է ռուս և համաշխարհային գրականության ակադեմիկոս Գործիչներ Ֆեոդոր Դոստոևսկու, Նիկոլայ Նեկրասովի և Գյուստավ Ֆլորբերի ծննդյան 200-ամյակով: Ուրախալի է, որ այս գիտաժողովը կազմակերպվել է նախորդ երկու գիտաժողովների ձևաչափով՝ երկու երկրների անվան գրականագետների, լեզվաբանների, արվեստաբանների և պատմաբանների մասնակցությամբ», - ասաց Աշոտ Սարգսյանը:

Նա հիշեցրեց, որ այս տարվա նոյեմբերի 5-ին ՀՀ գիտությունների ազգային



ակադեմիայի և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի միջև ստորագրվել է գիտական համագործակցության պայմանագիր, որում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում պատմական և բանասիրական գիտությունները: «Այսօրվա համաժողովը կդառնա մեր համատեղ համագործակցության կարևոր էջերից մեկը», - նշեց Աշոտ Սարգսյանը: Նա նաև շեշտեց, որ ներկայումս ՀՀ ԳԱԱ-ում հատուկ ուշադրություն է դարձվում երիտասարդ մասնագետների գիտական առաջընթացին: «Ուրախալի է, որ այս գիտաժողովի մի շարք զեկույցների հեղինակները երիտասարդ մասնագետներն են Հայաստանի տարբեր գիտական կազմակերպություններից, այդ թվում՝ մագիստրոսներ: Այս հանգամանքը վկայում է, որ պատրաստվում է ռուս և համաշխարհային գրականությանը զբաղվող գրականագետների արժանի փոխարինում, և երկրորդ համագործակցությամբ կշարունակվեն այն ավանդույթները, որոնք ժառանգել ենք խորհրդային ժամանակներից», - ասաց ակադեմիկոս Սարգսյանը:

ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը նշեց, որ ռուս և համաշխարհային գրականության մեջ անգնահատելի է Ֆեոդոր Դոստոևսկու, Նիկոլայ Նեկրասովի և Գյուստավ Ֆլորբերի ավանդը: «Այս գիտաժողովը հերթական քայլն է Հայաստանի և Ռուսաստանի գիտությունների ակադեմիաների կապերի ամրապնդման ուղղությամբ, ինչը շատ

կարևոր է մեր երկրների համար», - ասաց Սերգեյ Կոպիրկինը:

ՀՀ-ում Ղազախստանի արտակարգ և լիազոր դեսպան Բուլատ Իմանբաևն ասաց, որ Ղազախստանի կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում նախկին խորհրդային պետությունների միջև մշակութային և գրական կապերի ամրապնդմանը և հետագա զարգացմանը, որը կրում է պատմական բնույթ:

ՌԴ Մաքսիմ Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի տնօրեն Վադիմ Պոլոնսկինը նշեց, որ այս տարի Հայաստանը կարևոր տեղ է զբաղեցնում գրական մեծությունների հորեյանների օրացույցում: «Շատ կարևոր է, որ այս գիտաժողովն անցկացվում է համատեղ: Այն, որ մեր հայ գործընկերներն այսօր խոսում են Դոստոևսկու և Նեկրասովի մասին, հայ ոգու վկայություն է, և այս հավատարմությունը մեր կողմից շատ ողջունելի է: Մեր ժամանակներում սթափությունը և ողջամտությունը անգնահատելի է», - ասաց Վադիմ Պոլոնսկինը:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը նշեց, որ Դոստոևսկու, Նեկրասովի և Ֆլորբերի ստեղծագործությունները հայտնի են հայ ընթերցողին, քանի որ նրանց նշանակալից գործերը թարգմանվել են հայերեն: «Ռուսական և համաշխարհային գրականության այս երեք մեծությունները միավորված են մեկ գիտաժողովում ոչ միայն մեծ գրական տաղանդով, այլև ընդհանուր հումանիզմով,

մարդկային հոգին ուսումնասիրելու ցանկությամբ՝ տարբեր, հաճախ նույնիսկ հակադիր տեսանկյուններից: Ավելին, ռուս և ֆրանսիացի դասականների ստեղծագործությունները որոշակի դրական ազդեցություն են ունեցել 19-20-րդ դարերի հայ գրականության զարգացման գործում՝ գրողների աշխարհայացքի ձևավորման և գրական գործերի բովանդակության առումով: Ինչպես երևում է գիտաժողովի զեկույցների վերնագրերից, երեք դասականների, հատկապես Դոստոևսկու ստեղծագործությունները, վերլուծվում են ոչ միայն իրենց ժամանակի, այլ նաև այսօրվա գրական, պատմական և փիլիսոփայական գաղափարների համատեքստում: Այս համագործակցությունը պետք է նպաստի, որպեսզի ռուս գրականությունը դիտարկվի հայ գրականագետների աչքերով, և ռուս գիտնականներն իրենց հայացքն ուղղեն դեպի հայ գրականությունը: Ինչպես տարբեր գրականությունների թարգմանություններն են հարստացնում միմյանց, այնպես էլ գրականության փոխադարձ ուսումնասիրությունն ընդլայնում է նրանց գրական ընկալման շրջանակը», - ասաց Յուրի Սուվարյանը:

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Վարդան Դևրիկյանը նշեց, որ երեք գրական մեծությունների ժառանգությունը կարևոր տեղ է զբաղեցնում Հայաստանի գրական հանրության կյանքում:

Գիտաժողովի նիստերին ներկայացվեցին զեկույցներ՝ նվիրված ռուս և համաշխարհային երեք մեծությունների գրական ժառանգությանը, հայ գրականության հետ ունեցած կապերին, հայերեն թարգմանություններին, հայ գրական կյանքում նրանց ստեղծագործությունների մասին եղած արձագանքներին:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին դեկտեմբերի 1-ին և 2-ին՝ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: Գիտաժողովի ավարտին ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և Մաքսիմ Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի միջև ստորագրվեց հուշագիր:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ԻԿՐԱՆԵՏ Հայաստան կենտրոնում քննարկվեցին հայ-իտալական գիտական համագործակցության ծրագրերը

Ա.թ. նոյեմբերի 30-ին Հայաստանում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Ալֆոնսո Դի Ռիգոն և հյուպատոսական ու վարչական բաժնի ղեկավար Աննառոզա Կոլանջելոն այցելեցին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ԻԿՐԱՆԵՏ կենտրոն միջազգային կազմակերպություն:

ԻԿՐԱՆԵՏ Հայաստան կենտրոնի տնօրեն Նարեկ Սահակյանը ներկայացրեց կենտրոնի գործունեությունը, հիմնական գիտական հետազոտություններն ու արդյունքները, իտալական գիտահետազոտական ինստիտուտների և համալսարանների հետ համատեղ ծրագրերը: Ներկայացվե-



ցին բարձր էներգիաների աստղաֆիզիկայի և արբանյակային կայանների տվյալների մշակման բնագավառներում ԻԿՐԱՆԵՏ-ի տարբեր կենտրոնների և Իտալիայի Տիեզերական գործակալության հետ համատեղ իրականացվող ծրագրերը և ապագա նախագծերը:

Կողմերը նշեցին աստղաֆիզիկայի բնագավառում հայ-իտալական գիտական համագործակցության կարևորությունը և քննարկեցին համագործակցության զարգացման ու ընդլայնման հնարավորությունները:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Երեք մարմնի խնդրի դասական և քվանտային հետապոստությունների նոր պատկերացումներ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի և Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Աշոտ Գևորգյանը վերջին տարիներին զարգացրել է սկզբունքային նոր տեսական պատկերացումներ երեք մարմնի դասական և քվանտային համակարգերի հետազոտության բնագավառում:

Երեք մարմնի դասական խնդիրն առաջին անգամ ձևակերպել է խոշորագույն բնագետ Իսահակ Նյուտոնը: Անցած ավելի քան երեք դարերի ընթացքում այդ խնդրով զբաղվել են ժամանակի խոշորագույն բազմաթիվ մաթեմատիկոսներ և ֆիզիկոսներ՝ Լագրանժը, Էյլերը, Պուանկարեն և այլք, որի արդյունքում ծնվել են ժամանակակից մաթեմատիկայի և ֆիզիկայի երեք տասնյակից ավելի գիտական ուղղություններ: Սակայն խնդրի բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը չի նվազել առ այսօր՝ կապված դինամիկ բարդ համակարգերի ուսումնասիրության մեջ դրա ունեցած դերի և հարաճուն կիրառական նշանակությունների հետ:

Մասնավորապես խնդրի հետևողական հետազոտությունը կարող է պատասխանել քվանտային մեխանիկայի կարևորագույն հիմնահարցերից մեկին՝ «դասական աշխարհը նկարագրելիս արդյո՞ք անընդհատությունը հանդիսանում է հիմնարար»: Այդ հարցի պատասխանն ունի առանցքային նշանակություն դինամիկ համակարգերում քվանտային-դասական անցման անհնարինության խնդրի պարզաբանման համար, որը բխում է Անդրե-Բերրի պնդումից:

Երեք մարմնի խնդրի ուսումնասիրությունները կարող են լույս սփռել նաև բարդ համակարգերում շարժման առանձնահատկությունների և թաքնված համաչափությունների վրա, որոնք շատ կարևոր են դինամիկ համակարգերի ճշգրիտ նկարագրման, առավել ևս

նրանց ղեկավարման համար: Երեք մարմնի դասական և քվանտային խնդիրների ուսումնասիրություններն արդիական են ատոմ-մոլեկուլային և միջուկային տարրական ընթացքների հաշվարկման համար, որոնց մասին հավաստի տվյալների պահոցների առկայությունն անհրաժեշտ պայման է ժամանակակից քիմիական, ինչպես նաև միջուկային տեխնոլոգիաների զարգացման համար:

Աշոտ Գևորգյանի աշխատանքներում ցույց է տրված, որ եթե երեք մարմնի խնդիրը ձևակերպվի համակարգի էներգիայի մակերևույթի վրա, որը կոր տարածություն է, այդ դեպքում հնարավոր է դառնում բացահայտել մասնիկների համակարգի ներքին շարժման միջև այժմ անհայտ համաչափություններ: Վերջինս հնարավորություն է տալիս ստանալու շարժման լրացուցիչ երկու պահպանվող մեծություն (ինտեգրալներ) և դինամիկ համակարգի նկարագրության խնդիրը, փոխարինելով տարածության մեջ կրճատելով, բերել 6-րդ կարգի համակարգի 8-ի փոխարեն:

Հետազոտության կարևորագույն ձեռքբերումներից է նաև այն, որ երեք մարմնի խնդրի օրինակով ապացուցվել է, որ ցանկացած բարդ դինամիկ համակարգ օժտված է իրեն հատուկ այսպես կոչված **ներքին ժամանակով, որն իր բնույթով կարող է էապես տարբերվել սովորական ներկայով անցնող և անցյալը ապագային կապող ժամանակից: Այլ խոսքով, ինչպես ցույց են տվել հաշվարկները, տարբեր եռատոմ ատոմամոլեկուլային համակարգերի համար ներքին ժամանակն ունի ոչ սովորական վարք, այն կարող է փոխել ընթացքի արագությունը և ուղղությունը, և որ ամենակարևորն է, ճյուղավորվել՝ դառնալով, ըստ էության, անընդհատ: Վերջին համագամները համագեցնում է շատ անակնկալ և կարևոր եզրահանգման. դասական աշխարհի նկարագրությունը, այնուամենայնիվ,**

անընդհատ է: Վերջին առաջին հայացքից թվում է, թե հակասում է նյուտոնյան մեխանիկայի սովորական ժամանակի նկատմամբ շրջելիության փաստին, բայց իրականում ընդգծում է բարդ դինամիկ համակարգերում ընթացող պրոցեսների համար ավելի հիմնարար և բնական ժամանակային պարամետրի սահմանման անհրաժեշտությունը: Այս հանգամանքի վրա ուշադրություն է դարձրել Նոբելյան մրցանակի դափնեկիր Իլյա Պրիգոժինը: Նա գիտական գրականության մեջ առաջին անգամ ներմուծել է քիմիական փոխարկման «ընթացքի» ներքին ժամանակի հասկացությունը, որը հիմնված է բնական դատողությունների վրա և կապված է թերմոդինամիկայի երկրորդ օրենքի հետ, ի տարբերություն Աշոտ Գևորգյանի կողմից կատարված աշխատանքների, չի բխում դասական մեխանիկայի հիմնական սկզբունքներից: Աշոտ Գևորգյանի կողմից ապացուցված ներքին ժամանակը նկարագրում է համակարգում տեղի ունեցող տարրական ընթացքների չափը: Այն հիմնարար քանակական և իմացաբանական բացատրություն է տալիս դասական դինամիկ համակարգերում անկայունության և քաոսի առաջացման կարևորագույն հարցերին:

Ներքին ժամանակի պատկերացման շրջանակներում զարգացված երեք մարմնի քվանտային խնդիրը հնարավորություն է տալիս լուծելու նաև դինամիկ համակարգում քվանտային-դասական անցման Բերրիի կողմից ապացուցված անհնարինության հարցը:


Աշոտ Գևորգյանի կողմից դասական և քվանտային պատկերացումների շրջանակներում արտածված հավասարումները մաթեմատիկական տեսանկյունից հնարավորինս ամփոփ և համաչափ են և ստացված են երկմասնիկ և եռմասնիկ կամայական վարքի փոխազդեցությունների համար: «Հաշվի առնելով այն հան-

գամանքը, որ տարրական ատոմ-մոլեկուլային փոխարկումների ընթացքի մասին գիտական հավաստի տեղեկատվությունը մինչև այժմ ստացվում է փորձարարական ճանապարհներով, որը շատ ժամանակատար և ծախսատար է. թվային փորձերն այս պարագայում կարծես թե չունեն այլընտրանք: Այնուհանդերձ, ինչպես հայտնի է, մինչ այժմ չեն ստեղծվել թվային ալգորիթմներ եռմասնիկ համակարգերում տարրական բազմախողովակ ցրման ընթացքը թվայնորեն մոդելավորելու համար քիչ թե շատ կուռ տեսական պատկերացումների բացակայության պատճառով», - ասում է գիտնականը:

Նրա առաջադրած մոտեցումները հնարավորություն են տալիս մշակելու արդյունավետ, բարձր արտադրողական ատոմ-մոլեկուլային և միջուկային երեք մասնիկային խնդիրների թվային մոդելավորման համար՝ հաշվի առնելով արտաքին տարբեր դաշտերի և ազդակների առկայությունը: Այդպիսի ծրագրային գործիքների ստեղծումը կարող է մեծապես նպաստել ժամանակակից տեխնոլոգիաների զարգացմանը և ունի առևտրայնացման մեծ ներուժ:

Աշոտ Գևորգյանի ամփոփիչ աշխատանքը 2020 թ.-ին տպագրվել է հեղինակավոր Particles միջազգային ամսագրում և արդեն ներբեռնվել է ավելի քան 700 անգամ: Աշխատանքի վերաբերյալ իրենց դրական կարծիք են արտահայտել ժամանակակից խոշոր հետազոտողներ, պրոֆեսորներ Մայքլ Բերրին (Բրիստոլի համալսարան, Անգլիա), Անտոն Յայլինգերը (Ավստրիայի գիտությունների ակադեմիայի նախագահ, Վիեննա) և Լևոն Բեկլարյանը (Ֆիզիկատեխնիկական ինստիտուտ, Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն):

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



Շվեդիայում լույս է տեսել «Ուփսալայի բյուզանդագիտական մատենաշարի» հերթական հատորը՝ «Աստվածաշնչի ազդեցությունը Բյուզանդիայում»:

ԸՆԾԿԱԿԱՆ ԹԵՄԱՆ ԲՅՈՒՋԱՆԴԱԳԻՏԱԿԱՆ ԸՄՏՈՐՈՒՄ

բնագրեր, ձեռագրեր և դրանց ընթերցողները» վերնագրով: Անգլերեն և ֆրանսերեն հոդվածների շարքում տեղ է գտել նաև բելգիացի երիտասարդ հայագետ Էմանուել վան Էլվերդինգեի «Երանի՜ որ ունիցի գաւալ ի Սիոն. աստվածաշնչյան նյութեր հայերեն հիշատակարաններում» ուսումնասիրությունը:

Հայկական ձեռագրերի հիշատակարաններում Սուրբ Գրքի օգտագործումը հեղինակի ատենախոսության թեման է: Հայտնի է, որ հայերեն հիշատակարաններում առկա է հարուստ պատմական տեղեկատվություն, սակայն Վան Էլվերդինգեն դրանք ուսումնասիրել է գրական տեսանկյունից: Նա ցույց է տվել, թե հիշատակարաններ գրողները որքան խորաթափանց են եղել աստվածաշնչյան մշակույթում. անգամ կրթությամբ աչքի չընկնող գրիչները հիշատակարաններում դիմել են աստվածաշնչյան ակնարկների և հղումների՝ իրենց ոճը բարձրացնելու համար: Վան Էլվերդինգեն ներկայացրել է այս միափոխված մտքի բազմաթիվ հետաքրքրաշարժ օրինակներ: Նա ոչ միայն ենթադրում է այդ միաձուլման կիսով չափ գիտակցված գործընթացը, այլև հուշում, որ հայ գրիչները գի-

տակցաբար նմանակել են աստվածաշնչյան հարացույցը: Հեղինակը ներկայացրել է այդ, իր խոսքերով, «քրիստոնեական կրթության ենթագիտակցական արձագանքների» օրինակներ՝ ավելի խոր խորհրդածելով այդ պարատեքստերում հիշված այն ուղերձների շուրջ, որոնք երբեմն հասել են բանաստեղծության մակարդակի:

Էմանուել վան Էլվերդինգեն Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիան համալսարանի բողոքական աստվածաբանության բաժնի պոստդոկտորանտ է: Որպես բելգիական Գիտական ուսումնասիրությունների հիմնադրամի և Լուվենի կաթոլիկ համալսարանի գիտաշխատող՝ իր թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է հայերեն ձեռագրագիտության ոլորտում 2017 թվականին: Զբաղվում է հունարեն և հայերեն ձեռագրերի պարատեքստերի, ինչպես նաև ձեռագիր գրքերի պատմամշակութային նշանակության ուսումնասիրությամբ:

Ավելացնենք, որ «Աստվածաշնչի ազդեցությունը Բյուզանդիայում» հատորը կարելի է անվճար ներբեռնել հետևյալ հասցեից <http://urn.kb.se/resolve?urn=urn:nbn:se:uu:diva-420968>

Ա. Բ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն Նաիրա Այվազյանը գիտական պարզացումների մասին

- Ի՞նչ արդիական խնդիրներով է զբաղվում ֆիզիոլոգիայի ինստիտուտը, և ի՞նչ հեռանկարներ ունեն այդ հետազոտությունները:

- Ֆիզիոլոգիայի ոլորտում ստացված արդյունքների առաջին շահառուն բժշկագիտությունն է: Իզոլոր չէ, որ Նոբելյան մրցանակներից մեկը կոչվում է ֆիզիոլոգիայի և բժշկագիտության Նոբելյան մրցանակ: Այս տարվա մրցանակը կիսել են մի քանի գիտնականներ, որոնցից մեկը մեր հայրենակից, ամերիկահայ հետազոտող Արտեմ Փաթախոյանն է:

Մեր ծրագրի ղեկավարը ֆիզիոլոգիայի ինստիտուտի խորհրդատու, ԱՄՆ-ի Ջորջ Վաշինգտոն համալսարանի բժշկական ֆակուլտետի պրոֆեսոր Նարինե Սարվազյանն է, իսկ ես և Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի կենսաֆիզիկայի և բջջային ինժեներիայի ինստիտուտի կենսաբանական գիտությունների դոկտոր Դմիտրի Շչերբինը համադեկավարներ ենք: Ծրագրի ֆինանսավորումը 300 հազար ԱՄՆ դոլար է 3 տարվա համար:

Այդ ցանցի մեջ մենք ազատ ենք նե-

նաև դրանք բարձրացնում ենք մեր որակական մակարդակի: Ընդլայնվել է համագործակցությունը Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի բաժանմունքների, մասնավորապես Յեռավորարևելյան մասնաճյուղի հետ: Մենք համատեղ ուսումնասիրում ենք օվկիանոսային ֆաունայի ներկայացուցիչների արտադրած կենսաբանական ակտիվ նյութերի կիրառումը ներդրող գեներատիվ հիվանդությունների բուժման մեջ: Նոր և հետաքրքիր ծրագիր է՝ հիմնված մեր նախորդ տարիներին ունեցած թույլների և կենսաբանական ակտիվ նյութերի հետ աշխատելու փորձի վրա:

Ամենամեծ ծրագիրը, որը ներկայումս իրականացնում է ֆիզիոլոգիայի ինստիտուտը, կապված է հայկական իժերի թույլի դեմ հակաթույնի ստացման հետ: Այն նպատակաուղղված ծրագիր է արդեն արտադրանքի ստացման համար: Մենք կկարողանանք առաջարկել մեր արտադրանքը տարածաշրջանի երկրներին, որոնք ունեն նմանատիպ օժատեսակներ, ինչու չէ, նաև մեթոդաբանության առումով կարող ենք մեր մշակումներ առաջարկել եվրոպական երկրների գիտական կենտրոններին: Արդեն ստացել ենք հակաթույնի նախատիպը, որը փորձարկվել է, և այդ մասին տպագրվել է գիտական հոդված Մեծ Բրիտանիայի Օքսֆորդի համալսարանի հանդեսում:

Այս տարի ինստիտուտի ընդհանուր ֆինանսավորման մեջ դրամաշնորհային ֆինանսավորումը հասել է 50 տոկոսի, սակայն ֆինանսավորման մեծ մասը բյուջետային է:

- Ո՞ր կառույցների հետ է ինստիտուտը հիմնականում համագործակցում իր ծրագրերի իրականացման շրջանակներում, և որքանով են երիտասարդ գիտնականներն ընդգրկված այդ ծրագրերի մեջ:

- Մենք համագործակցում ենք ակադեմիական ինստիտուտների, բուհերի հետ: Համատեղ մեծ գիտակրթական ծրագիր ունենք Միսիթի Յերաքոն անվան պետական բժշկական համալսարանի հետ, ուղեղի կենտրոնի հիմնադրման վերաբերյալ: Արտասահմանյան համագործակցությունը շատ լայն է: Ներկայումս ընտրված են Թունիսիայի միջազգային ասոցիացիայի Եվրոպական սեկցիայի նախագահ Խաջոդ 3 տարվա համար: Պահպանում են կապերը բոլոր եվրոպական երկրների հետ, որոնք ունեն բարձրորակ կենտրոններ: Համագործակցում ենք Խորվաթիայի, Իսպանիայի ինստիտուտների հետ, ֆրանսիական ֆարմակոլոգիական ընկերության հետ, որն արտադրում է հակաթույներ, Լատինական Ամերիկայում Բրազիլիայի Բուտանտան ինստիտուտի հետ, մի շարք նախագծեր ենք իրականացրել գերմանացի, բելգիացի գործընկերների հետ: Մեր համագործակցության աշխատանքները ձգվում է Հարավային Ամերիկայից մինչև Ավստրալիա:

Երիտասարդ գիտնականներին պարտադիր ներգրավում ենք ծրագրերում, աշխատում ենք ուսման 3-րդ տարուց սկսած, որովհետև, ցավոք, նկատել ենք, որ դիպլոմ ստանալը բավական չէ լավ մասնագիտացում և ծիրք ունենալու համար: Հաճախ դիպլոմային աշխատանքները մեզ մոտ են իրականացվում, ինչը մեզ հնարավորություն է տալիս ընտրելու որակյալ աշխատակիցներ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



կծուի և ակուստիկ ռեցեպտորների ուսումնասիրության համար:

Ֆիզիոլոգիայի ինստիտուտը ներկայում ունի մի շարք մեթոդաբանություններ՝ հիմնված ժամանակակից մոտեցումների վրա, ինչպիսին են կենսաֆիզիկական, մոլեկուլյար կենսաբանությունը, հյուսվածքային ինժեներիան: Վերջին 10 տարվա ընթացքում ինստիտուտի հիմնական ուղղվածությունը ենթակառուցվածքների արդիականացումն է, որը խիստ անհրաժեշտ է ժամանակակից գիտության հետ համընթաց քայլերի համար: Մենք մասնակցել ենք արդիականացման մանր և խոշոր մրցույթներին և ձեռք ենք բերել Հայաստանի համար մի քանի յուրահատուկ սարքավորումներ, որոնց շնորհիվ վերջերս շահել ենք մեծ և հեղինակավոր դրամաշնորհ:

Ֆիզիոլոգիայի ինստիտուտի ներկայացրած «Նախկին խորհրդային երկրների համար կենսաբժշկական պատկերավորման ցանցի ստեղծում» ծրագիրն արժանացել է «Հան-Ցուկերբերգ նախաձեռնություն» (Chan Zuckerberg Initiative) հիմնադրամի դրամաշնորհին: Այս ծրագրի նպատակն է ձևավորել տարածաշրջանային ցանց, որը բաղկացած է Հայաստանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի, Ռուսաստանի և Ուկրաինայի հետազոտողներից, ովքեր հետաքրքրված են կենսաբժշկական գիտություններում պատկերավորման մոտեցումների կիրառմամբ:

Ծրագրի ակնկալվող արդյունքները ներառում են իրենց աշխատանքում պատկերավորման մոտեցումները կիրառող կենսաբժշկական հետազոտողների թվի ավելացում, տարածաշրջանային պատկերավորման առկա ենթակառուցվածքի ավելի լավ օգտագործման միջոցով տարածաշրջանային համագործակցության առաջընթաց և պատկերավորման վրա հիմնված կենսաբժշկական հրապարակումների ավելացում:

րառել նաև ԱՄՆ-ից կամ Եվրոպական երկրներից վերապատրաստման ուղղված գիտական կենտրոններ: Ամբողջ իմաստն այն է, որ առավելագույն մեթոդաբան ցանցի մեջ բժշկագիտական թևի ներկայացուցիչների, երիտասարդների, պատրաստենք մասնագետներ, ովքեր կկարողանան կիրառել նորագույն մեթոդները նաև բժշկագիտության մեջ: Դրամաշնորհի հիմնական թիրախը հենց ցանցի ստեղծումն է մասնագետների համար, որոնք կկարողանան կրթել մեր մասնագետների, և դա կլինի բժիշկ-գիտնական համագործակցության հիման վրա: Սա է մեր ծրագրի ռազմավարությունը:

- Որքա՞ն է կազմում դրամաշնորհների բաժինը ինստիտուտի ընդհանուր ֆինանսավորման մեջ:

- Վերջին տարիներին ստացել ենք երիտասարդ գիտնականների համար նախատեսված դրամաշնորհներ: Պատերազմի տարիներին մենք դարձանք «Հորիզոն-2020» դրամաշնորհային ծրագրի շահառու: Ինստիտուտն ունի միջազգային լավ համբավ թունաբանության ոլորտում:

Ներկայումս ինստիտուտի կողմից իրականացվում է 10 գիտական ծրագիր՝ Գիտության կոմիտեի աջակցությամբ: Այս տարվա մեր երկու խոշոր կիրառական դրամաշնորհները ենթադրում են ֆարմակոլոգիական/կենսատեխնոլոգիական պատրաստի արտադրանքի մշակում և ստացում, որոնցից մեկն իրականացվելու է բելառուս գործընկերների հետ: Այն կապված է ոսկյա և արծաթյա մանոմասնիկների ստացման հետ, որը կարող է կիրառվել օճկոթերապիայի մեջ:

Ինստիտուտը սերտ համագործակցում է Ռուսաստանի, մասնավորապես Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի գիտական կենտրոնների հետ: Մենք ոչ միայն պահպանում ենք Սովետական Միությունից մնացած ավանդական կապերը, այլ



ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ

2021թ. հունիսի 21-ից հուլիսի 1-ը Մեծ Բրիտանիայում անցկացվեց Եվրոպայի գրքի ամենամեծ ցուցահանդեսներից մեկը՝ Լոնդոնի գրքի տոնավաճառը: 2021 թվականին առաջին անգամ ցուցահանդեսն անցկացվեց գլոբալ թվային ձևաչափով: Ցուցանմուշների համար ստեղծվել էր 2 վիրտուալ հարկերի շքեղ առցանց տարածք:

1971թ.-ին ստեղծված Լոնդոնի գրքի ցուցահանդեսը 50 տարիների ընթացքում հաջողությամբ զարգացավ՝ դառնալով համաշխարհային առաջատար ֆորում, որն ավանդաբար միավորում է աշխարհի խոշորագույն հրատարակիչներին, գրադարանավարներին, առաջատար հեղինակներին, գրքի տարածողներին և գիտական հանրության բազմաթիվ ներկայացուցիչներին: Մինչև 2020 թվականը ցուցահանդեսն անցկացվում էր ամեն տարի: 2021 թվականին այն առաջին անգամ անցկացվում էր առցանց:

Ցուցահանդեսին մասնակցում էին աշխարհի ավելի քան 50 երկրների ներկայացուցիչներ: Ցուցահանդեսի 10 օրվա ընթացքում վիրտուալ տարածքի շրջանակներում կազմակերպվել են բազմաթիվ առցանց հանդիպումներ, դասախոսություններ, սեմինարներ՝ նվիրված ժամանակակից գրականության խնդիրներին, գրքերի հրատարակում, գրքերի արտադրանքի տարածում և մատչելիություն, հեղինակային իրավունքի հիմնահարցեր, ներառյալ կրթական և գիտական հրատարակություններ:

Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, բազմաթիվ ակադեմիաների անդամ, «Ազգ»-ի երկարամյա թղթակից Ստեփան Պապիկյանի աշխատանքը բարձր է գնահատվել Լոնդոնի գրքի միջազգային ցուցահանդեսի ժամանակ, և ամփոփագիրը ներառվել է հատուկ կատալոգում (Լոնդոնի գրքի ցուցահանդես, 2021 հունիսի 21-հուլիսի 1):

Ս. Պապիկյանը շուրջ 200 գիտական աշխատությունների հեղինակ է, բազմաթիվ ակադեմիաների իսկական անդամ: Նա ներկայումս մեծ ծավալի աշխատանքներ է կատարում Հայաստանի և Արցախի Հանրապետությունների, ինչպես նաև համաշխարհային էներգետիկայի զարգացման համար: Հեղինակել է «Հայաստանի էներգետիկայի պատմությունը» քառահատոր գիտական մենագրությունը: 2017 թ. Արցախի էներգետիկայի զարգացման բնագավառում ծանրակշիռ ավանդի համար պարգևատրվել է Արցախի պետական պարգևով՝ «Երախտագիտություն» մեդալով: Հաջողությամբ տպագրվում է նաև արտասահմանյան հեղինակավոր գիտական պարբերականներում:

«Ազգ»-ը ջերմորեն շնորհավորում է իր աշխատակցին՝ արձանագրած հաջողությունների առթիվ:



ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԵՎ ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆ

Վարպետի՝ Ավետիք Իսահակյանի և XX դ. առաջին քառորդի հայ իրականության երևելի դեմքերից մեկի՝ Դավիթ Անանունի առնչությունների մասին մինչև վերջերս հայտնի էր, որ նրանք ծանոթ են եղել դարասկզբին։ Այդ մասին Դ. Անանունը Բաքվի 26 կոմիսարներին նվիրված «Բաքվի շիրիմները» վերնագրով հոդվածաշարում գրում է. «Մեր ֆիրման (Թումանյան եղբայրների մաթթա-հանքերի, որտեղ ծառայում էր — Ա. Ջ.) հեղափոխական կենտրոնի հռչակ ուներ։ Մի խումբ ծառայողներս գրչի ու գրքի սիրահարներ էինք։ Կարողում էինք, վիճում, թարգմանում, թղթակցություններ գրում թերթերին, գրքեր տարածում ... Մեզ հյուր էին գալիս հայ գրողներ (Ավ. Իսահակյան, Դ. Դեմիրճյան և այլն) ...»։

Երկու մեծերի հետագա առնչությունների հետ կապված մեր պրպտունները տարիներ ի վեր ապարդյուն էին։ Սակայն վերջերս լույս է տեսել Ավետիք Իսահակյանի «Երկերի լիակատար ժողովածու»-ի ծավալուն XIV հատորը (Երևան, 2021, 1136 էջ), դրանում ընդգրկված են Վարպետի՝ 1924—1957 թթ. գրած մամակները, որոնք նոր լույս են սփռում խնդրո առարկա հարցում։ Ի դեպ, հատորը լույս է տեսել ազգային բարերարներ Միքայել և Կարեն Վարդանյանների հովանավորությամբ՝ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ։ Բնագրերը հավաքել է Ավիկ Իսահակյանը, հրատարակության է պատրաստել, ծանոթագրել և անվանացանկերը կազմել է Լաուրա Վիրաբյանը։ XIV հատորում Ավիկ Իսահակյանի գրչին է պատկանում ընդարձակ վերջաբանը՝ «Երկու քարի արանքում» խորագրով (էջ 932—1049)։ Հատորում ընդգրկված մամակները բազմաթիվ կարևոր հարցեր են պարզում, որոնք առնչություն ունեն Ավ. Իսահակյանի անձի, կյանքի, գործունեության, շրջապատի, մտերիմ ընկերների հետ ունեցած հարաբերությունների, հասարակական-քաղաքական, գրական-մշակութային բնույթի խնդիրների մասին։ Բանաստեղծը բովանդակալից մամակներ է գրել անվանի գրողներից, գիտնականներից, հասարակական-քաղաքական, մշակութային գործիչներից շատ շատերին։ Այդ շարքում ուրույն տեղ ունեն Դավիթ Անանունին գրածները։

Հայտնի իրողություն է, որ Դ. Անանունն իր ողջ գործունեության ընթացքում առանձնահատուկ տեղ է հատկացրել հայրենիքում հայախավաքմանը։ Հայտնի է նաև, որ խորհրդային իշխանության առաջին տարիներին երկրի ղեկավարները մեծ ջանք էին գործադրում այդ գաղափարը կյանքի կոչելու համար։ Շատերի թվում՝ հայրենիք վերադառնալու կոչով, նրանք դիմում են նաև արտերկրում գտնվող Ավետիք Իսահակյանին։ «Ինձ համար ճանապարհը միշտ բաց է, — 1925 թ. նոյեմբերի 17-ին Վենետիկից ՀՀ-ի հայտնի գործիչ, Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրի խմբագիր Ռուբեն Դարբինյանին գրում է Իսահակյանը։ — Ամեն տարի պաշտոնապես դիմում անում եմ։ Ես քաշ եմ տալիս միշտ։ Մամականդ Մյասնիկյանը շատ էր ուզում, որ գնայի։ Այդ խումբը (խոսքը Պ. Մակինցյանի, Ա. Մյասնիկյանի, Դ. Անանունի, Յ. Խանգադյանի մասին է — Ա. Ջ.) միշտ բարևում — ընկերներ մնացին ինձ, սկսած 1903-ից» (էջ 121)։

Հայաստան վերադառնալու հարցում բանաստեղծն այլոց շարքում քանիցս խորհուրդ է հարցրել նաև Դ. Ա-

նանունից։ Այդ մասին Ավ. Իսահակյանի մամակներում կան մի շարք խոսույն վկայություններ. դրանցից առաջինը Դ. Անանունին գրած նրա «1925, 1—12 դեկտեմբերի, Վենետիկ» թվակիր ընդարձակ՝ անչափ հետաքրքրական ու բովանդակալից մամակի հետևյալ տողերն են. «Բյուրեղացած սրտից բխած թանկագին մամակը ամենաքաղցր ծայներ զարթնեցրեց հոգուս մեջ. — մեր անհետացած, կորած ժողովրդի ծայն էր, կորած ընկերների ծայն էր, մանկության ժամանակի գեղի ժամի զանգի ծայն էր և բոլոր անուշ ծայները մեր լեռների աղբյուրների բյուրեղյա։ Արցունքով կարդացի ամեն տողը, և արցունքով գրում եմ այս տողերը։ ... Քո մամակը՝ բարձր մոուշ զգացմունքի, ազնիվ մտքի ու ոճի, եղավ ինձ համար՝ Անուշ բանտի մեջ մոռացված Արշակին իր թագավոր լինելը հիշեցնող Դրաստամատը։ Ես օտարել էի ինձ, ես մոռացել էի ինձ, ես ոչինչ էի դարձել՝ ջարդված, հուսահատ հայ ժողովրդի զարհուրելի բախտից, գազազած ու դառնացած, **դու վերադարձիր ինձ իմ թագը**. դու ասում ես, թե հայ ժողովուրդ կա՝ իր սուրբ լեզվով ու հողով, որ հիշում է ինձ. ընկերներ կան, ուզում են ինձ. տեղ կա ինձ համար ժողովրդի և ընկերների սրտի մեջ — աղանմոյա գահ։

Դո՛ւ եղար իմ բախտի դարբնոցը, ոչ թե ես։ Հավիտյան պիտի սիրեն քեզ, ավելի, շատ ավելի, որքան մեքս զգամ ուժերս. սիրում եմ քեզ իբրև ազնվության



մի կայուն սյուն, կանգուն մնացած պղտոր հեղեղների առաջ, իսկ հիմա — իմ վերածնողին ... (ընդգծումները մերն են — Ա. Ջ.), (էջ 124—125)։

Իսկ ահա Կահիրեում լույս տեսնող ՀՀ-ի օրգան «Հուսաբեր» օրաթերթի խմբագիր, հայտնի դաշնակցական գործիչ Վահան Նավասարդյանին հասցեագրած «1925, 12 դեկտեմբերի, Վենետիկ» տարեթվով մամակում բանաստեղծը հայտնում է. « ... ամբողջ հոգով ձգտում եմ Հայաստան։ Նա միայն կարող է ինձ կենդանացնել, ժողովրդի հետ, նրա մեծ շնչով շնչել։ 15 տարի եղավ, որ պանդուխտ եմ. 15 դար ... բավական է։ Դ. Անանունին գրեցի, խորհուրդ հարցրի գնալու մասին, գրում է «Եկ, եկ, քեզ ինչ, թե ով է իշխում, դու քո գահն ունես ժողովրդի ու մեր սրտում» (էջ 129)։ «<1926> 26 հունվարի, Վենետիկ» թվակիր մամակում էլ նույն հասցեատիրոջը գրում է. « ... Գրել էի Դավիթ Անանունին, խորհուրդ էի հարցրել վերադարձիս մասին. գրում է — Եկ, եկ, եկ։ Քեզ պես մարդոց պետք ունենք, մի վախեցիր, քանակը որակ է դառնում, երբ շատանանք, սոցիալիզմն ու Սիոնը իրար կ'օգտենք» (էջ 139)։

Իսկ արդեն անձամբ Դ. Անանունին <1926, 15 հունվարի, Վենետիկ> թվակիր մամակում Ավ. Իսահակյանը գրում է. «Ես չա՛տ կ'իմանայի քեզ, միայն մի երկու բառ գրես ինձ (**ես շատ եմ հավատում քեզ**) սիրելի Դավիթ — արի կամ մնա (ընդգծումը մերն է — Ա. Ջ.), (էջ 136)։

Ռ. Դարբինյանին ուղղված «1926, հունիս» Վենետիկ» թվակիր մամակում էլ Իսահակյանը հայտնում է. «Ես խորհուրդ էի հարցրել (Հայաստան վերադառնալու խնդրով — Ա. Ջ.) Դ. Անանունից. գրում է, որ վերադառնամ» (էջ 164)։

Նկատենք, 1926 թ. հոկտեմբերին՝ հայրենիք գա-

լուց հետո, Երևանում Ավ. Իսահակյանը մշտապես շփվել է Դ. Անանունի հետ։ Դրա վկայությունը դարձյալ Վ. Նավասարդյանին ուղղված «1930, 11 օգոստոսի, Փարիզ» տարեթվով մամակի հետևյալ տողերն են. «Քանի դեռ Դավիթ Անանունը աքսորված չէր, երկու անգամ եղել ենք մայրիկիդ մոտ, ճաշել ենք (թյուֆթա ենք կերել), քո կենացը խմել ...» (էջ 287)։

Հավելենք. Դ. Անանունի՝ աքսորում եղած ժամանակ՝ 1934 թ., Ավ. Իսահակյանը Կ. Միքայելյանից տեղեկություն է խնդրել նրա մասին (էջ 344)։

Ավ. Իսահակյանի և Դ. Անանունի առնչությունների հետ կապված մեկ այլ հետաքրքիր իրողությունը վերջինիս «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901—1918)» աշխատության երրորդ հատորի տպագրությանն է առնչվում։ Պարզվում է, որ Ավ. Իսահակյանը դրանում մեծ դեր է ունեցել։ Այսպես, դեռևս «<1924>, 14 հոկտեմբերի, Վենետիկ» թվակիր՝ Ռ. Դարբինյանին ուղղված մամակում նա գրում է. «Մի պարոն, որ վախենում է անունը տալ, խնդրում է քեզ հայտնել (ինքը Հայաստանից է եկել), որ Դավիթ Անանունը փող է խնդրում քեզին, ինչ-որ գիրք է ուզում հրատարակել [խոսքը «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901—1918 թթ.)» գրքի մասին է — Ա. Ջ.]։ **Անանունը միակ մարդն է, որ ժայռի պես կանգնել է համատարած ստրկամտության մեջ, քննադատում է, և վախենում են նրանից** (ընդգծումը մերն է — Ա. Ջ.)։ Հիմա դու գիտես, թե ի՞նչ կերպով փողը պիտի հասցնես Երևան, երկի Պարսկաստանի միջոցով» (էջ 62)։

Ամենայն հավանականությամբ, նախապես Դ. Անանունը ցանկացել է գիրքը հրատարակել Հայաստանում, սակայն, նկատի ունենալով Միքայելյանների մոտ՝ Վենետիկում, տպագրության բարձր որակը, մտադրությունը փոխել է։ «1925, 23 նոյեմբերի, Վենետիկ» թվակիր մամակում Ավ. Իսահակյանը արտասահմանում Սովետական Միության առևտրական (Տորգարեդի) ներկայացուցիչ Պ. Մակինցյանին գրում է. «Սիրելի Պողոս, / ... Սպասում էի Դավիթի գրքի մասին վերջնական կարգադրության, սակայն ուրբաթն ավելի շուտ եկավ, քան չաբաթը։

Կարծում եմ, որ գիրքը չի տպվելու այստեղ, եթե ուզենաս էլ։

Տպարանի վարդապետը տեղափոխվում է Միլան, ուրիշն է նստելու նրա աթոռին, բայց սա երկրորդական է, անշուշտ։ Ցավալին այն է, որ հայերեն շարող երկու գրաշարներից մեկը խենթացավ. հիվանդանոցումն է։ Շարող չունեն։ Պոլսից սպասում են գրաշարի, որ այս վեց ամիս է՝ պիտի գա, և դեռ պիտի գա։ Իրանք էլ չեն իմանում, թե ե՞րբ պիտի գա։

Այդ դժվարությունից դուրս, հիմա առաջարկում են ինձ (երբ սկսեն գիրքը շարել), որ պայմանը կապենք իտալ<ական> լիրեթի վրա, որովհետև ֆր<անսիական> ֆրանկը ընկնում է, և, ըստ իրենց ակնարկի, 100-ին 50 տոկոս հավելումն պիտի անեն։ Առհասարակ սրանց հետ գործ ունենալը — դժվարին բան է։

Նոր վարդապետը, որ ստանձնե գործերը, կխոսիմ հետը, եթե ուզենաս, որ տպվի, և եթե գրաշարն էլ գա...» (էջ 123—124)։

Մեկ այլ մամակով էլ՝ «1926, 4 հունվարի, Վենետիկ», Ավ. Իսահակյանը Պ. Մակինցյանին հայտնում է. «Երկու օր առաջ տպարանի հետ վերջացրի պայմանը Դավիթի գրքի տպագրության վերաբերմամբ. նույն պայմանն է, նույն թղթով ու ձևով, ինչ որ քեզ հայտնել են նրանք, միայն ֆրանսիական ֆրանկը վերածեցինք դոլլարի հաշվով։ Դոլլարը իբրև կայուն դրամ։

Կսկսվի տպագրությունը իսկույն, երբ համաձայն ես, երբ — նոր առաջարկ — կանխավճար ուղարկես 100 դոլլար։ ... Եթե ուղարկելու ես դրամը, ուղարկիր նրանց, վանքի վրա, իսկ եթե չես համաձայնում, գրիր ինձ, որ ձեռագիրը ետ ստանում» (էջ 133)։

Պարզվում է նաև, որ գրքի տպագրության հարցով Ավ. Իսահակյանն ու Դ. Անանունը մամակագրական կապի մեջ են եղել։ Այսպես, Ավ. Իսահակյանը «<1926, 15 հունվարի, Վենետիկ>» թվակիր մամակում Դ. Անանունին գրում է. «Մոտ մի ամիս առաջ քեզ մամակ գրեցի գրքիդ տպագրության համար, բայց մինչև օրս չեն ձեռն գրված, և Պողոսից էլ (Մակինցյան — Ա. Ջ.) կարգադրություն չկա սկսելու. ինչ-որ հրահանգի է սպասում։ Լավ կ'լիներ, որ սկսած լիներ, քանի ես այստեղ եմ, որովհետև Հայաստան գալուց առաջ պիտի Փարիզ գնամ ... » (էջ 134)։

Ինչևէ. Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901—1918)» վերնագրով աշխատությունը 1926 թ. տպագրվում է Վենետիկում ...

Հակիրճ, ահա այսպիսին են եղել երկու հայ երևելիների միջև եղած մեզ հայտնի կապերը։

Անուշական ԶԱՔԱՐՅԱՆ
«Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր

ՀԵՏԱԳՐՔԻՐ Է

Լողացե՛ք ոսկու յեջ

Այս արտահայտությունն ընկալե՛ք ուղիղ իմաստով: Նման հաճելի հնարավորություն ունեն Տոկիոյի զբոսաշրջիկները և հենց իրենք՝ ճապոնացիները:

Ճապոնիայի խոշորագույն հյուրանոցները կահավորող ֆիրման «Էլիտար» հյուրանոցների տերերին առաջարկել է ձեռք բերել ոսկյա լոգարաններ, որպեսզի հաճախորդներն ընթրշխեն այն զգացողությունը, թե ինչ է նշանակում լոգանք ընդունել ոսկու մեջ:

Ոսկյա շքեղ լոգարանների հետ առաջարկվում է նաև ոսկյա թագ (իսկական ոսկուց): Թե ինչ կարծե՞մա նման պերճանքը, դժվար է հաշվել, սակայն, ինչպես ասում են, շքեղ ապրելը լավ բան է: Եվ մեկ էլ ասում են, թե «եթե բոշի յուղը շատ է լինում...»:

Շները ձեռք են բերում Նոր
Մասնագիտություն

Ինչի՞ են ընդունակ շները: Կարծում ենք, որ երեխան էլ կասի, որ շները հիմնալի պահապաններ են, հետախույզներ, որսորդներ, ոչխարապահներ, սահմանապահներ, խեղդվողներին փրկողներ, դայակներ և այլն, և այլն, և այլն:

Բայց որ կան նաև շներ, որոնք օգնում են մեղվաբույծներին, համոզված ենք՝ քչերը գիտեն:

Մեր չորքոտանի բարեկամների այս նոր մասնագիտությունը կարելի է անվանել այսպես. «փեթակները հետազոտող տեսուչ»:

Բանն այն է, որ ինչ-որ մանրէներ հաճախ վարակում են մեղուներին, և ամբողջ մեղվաբույծանիքը հիվանդանում է ու կործանվում: Եվ որպեսզի ստուգվի՝ փեթակը հիվանդ է, թե՞ չէ, պետք է այն բաց անել և մանրագին հետազոտել: Իսկ բացել կարելի է միայն տաք եղանակին, այլապես մեղուները կմորսեն և կոչնչանան:

Լաբորատոր ցեղի Մաքս անունով շունը մեղուների այդ ծանր հիվանդությունը հայտնաբերելու համար ամենակին կարիք չունի բացելու փեթակը: Հիվանդությունն ախտորոշելիս նա լրիվ ղեկավարվում է իր զգացողությամբ:

Անկախ եղանակից, «տեսուչը» արագ «համայց» է կատարում փեթակները: Եվ հենց որ փեթակներից որևէ մեկը կասկած է հարուցում, նստում է փեթակի առաջ և նայում իրեն ուղեկցող մեղվապահին: Դա նշանակում է, որ փեթակը հիվանդ է, և մեղվաբույծը պետք է շտապ միջոցներ ձեռնարկի՝ փրկելու հիվանդ մեղվաբույծանիքը: Հետաքրքիր է և այն, որ Մաքսը երբեք չի սխալվում:

Մեղվաբույծներին օգնելու համար այսօր աշխարհի որոշ երկրներում շներին ուսուցանում են մեղվապահի այս նոր մասնագիտությունը, և «տեսուչ-շների» թիվը հետզհետե ավելանում է:



- Ի՞նչ ես կարծում, ինչպե՞ս են կազմվում հորոսկոպները:

- Պոդոս, դու հորոսկոպով ի՞նչ ես:

- Կարիծ:

- Հրաշալի է: Ուրեմն, ըստ հորոսկոպի, եկող շաբաթ Կարիծները անպայման պետք է փակեն պարտքերը, այլապես նրանց սպառնում են մեծ անախորժություններ:



Մի շուն ամառանոցային հողակտորում բաժնով փորում է հողը: Հարևան շնիկը հնայված հայացքը չի կտրում նրանից: Շունը թողնում է փորելը և տխուր ասում է շնիկին.

- Ամեն ինչ սկսվեց նրանից, որ ես՝ հիմարս, սկսեցի հողաթափերը բերել տիրոջս:



Ամուսինը կնոջ համար գնում է ադամանդե շքեղ մի մատանի:

- Բայց, որքան ես հիշում եմ, նա քեզ խնդրել էր միայն «ՋիՓ» ավտոմեքենա, կշտամբեց ընկերը:



- Իհարկե, ուզում եր: Իսկ ես որտեղի՞ց ճարելի կեղծված «ՋիՓ»:



- Մեծարգո՝ պարոն Օբամա, խնդրում եմ Ձեզ իմ զորանչին՝ Փառանձեմ Ամտաշյանին, մտցնել «Մագնիտսկու» ցուցակի մեջ, քանի որ զորանչիս կողմից իմ ամուսնական, մարդու և քաղաքացու իրավունքներն անխնա ոտնահարվում են:



Շաբաթ օր է, առավոտյան ժամը 6-ը: Ձնգում է հեռախոսը: Քնաթաթախ, չարացած օդեսացին վերցնում է հեռախոսափողը.

- Այո, լսում եմ:

- Ներեցե՛ք, դա Իվանովների բնակարանն է:

- Ո՛չ, իհարկե, ո՛չ: Իսկ ի՞նչ եմ նրանք արել Ձեզ:

Ակադեմիական Նոր
հրատարակություններ

1. А. Акопян - Московский и Карсский договоры в судьбе армянского народа (по поводу 100-летия заключения договоров)©

2. A. Harutyunyan - China's One Belt, One Road Initiative in the Middle East and North Africa.

3. Ռ. Սարիյան – Ուրվագիծ արդի հայ տնտեսագիտական մտքի պատմության, հ. 4:

4. «Актуальные проблемы механики сплошной среды (сборник научных трудов)».

5. Մ. Խեմճյան - Նվիրատուն և խորհրդատուն հայ ժողովրդական հեքիաթներում:

6. Авт. коллектив - Изученность распространения и развития опасных экзогенных процессов и явлений и их воздействия на транспортные коммуникации горных стран (на примере Южного Кавказа и Центральной Азии)

7. «Ջահուկյանական ընթերցումներ», № 1 (16):

8. Մ. Շաֆիի Քաղբանի - Պարսից պոեզիայի զարգացման փուլերը (Սահմանադրական շարժումից մինչև միապետության անկումը):

9. Վ. Հարությունյան - «Տնտեսական հրաշքները» և «տնտեսական նորոգությունները» աշխարհում. Գործարկման ուղիները Հայաստանում:

10. «Բանբեր հայագիտության», 2021թ., № 3:

11. Г. Харатян - «Геноцид» Ходжалу и его миссия в карабахском конфликте.

12. H. Kharatyan - Khojalu «Genocide» and its Mission in Karabakh Conflict.

13. Օ. Խնկիկյան - Հայկական լեռնաշխարհի հյուսիսային տարածքները մ.թ.ա. VII-VI դդ. (ըստ հնագիտական տվյալների և գրավոր աղբյուրների):

14. Հեղ. խումբ - «Նոր բառեր», պրակ Զ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Ը. Բուհաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ
ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի

անալիտիկ քրոմատոգրաֆիայի և մասսպեկտրալ մեթոդների լաբորատորիայի

1. վարիչի

2. ավագ գիտաշխատողի

3. գիտաշխատողի

թափուր տեղերի համար:

Վարիչի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, գիտական գործունեությունը ղեկավարելու հմտություն, գիտական կադրեր պատրաստելու ունակություններ և փորձառություն:

Ավագ գիտաշխատողը պետք է ունենա գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, կազմակերպի և մասնակցի գիտական թեմայի շրջանակներում կամ իրականացնի առանձին հետազոտությունների գիտական ղեկավարումը, կազմակերպի գիտական թեմայի տեղեկատվության մշակումը և վերլուծության աշխատանքները, իրականացնի հետազոտությունների արդյունքների վերլուծության և ընդհանրացման աշխատանքներ: Ունենա տվյալ ուղղությանը վերաբերող գիտական տպագրություններ, այդ թվում՝ գրախոսվող ամսագրերում:

Գիտաշխատողը կարող է ունենալ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում, սակայն պարտադիր պահանջ է գիտական աշխատանքի փորձը և լաբորատորիայում առկա սարքավորումների վրա աշխատելու հմտությունները: Նախընտրելի է՝ ունենա գիտական տպագրություններ:

Անհրաժեշտ է ներկայացնել ինքնակենսագրություն (CV):

Մրցույթին մասնակցության համար պահանջվող փաստաթղթերը ներկայացնել ինստիտուտի գիտական քարտուղարին հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում:

Փաստաթղթերը ներկայացնել աշխատանքային օրերին, ժամը 10:00-17:00:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային
ակադեմիայի ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի
գիտատեխնոլոգիական կենտրոնի օրգանական քիմիայի և նուրբ
օրգանական քիմիայի ինստիտուտները հայտարարում են
ընտրություն պոլիմերային դիսպերսիաների և արոմատիկ
միացությունների սինթեզի լաբորատորիաների վարիչների
թափուր տեղերի համար.

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա գիտական կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տիպային (օրինակելի) կանոնադրության 16-րդ կետի՝ թեկնածություն առաջադրելու իրավունք ունեն համապատասխան բաժանմունքի բյուրոն, գիտական կոլեկտիվը և կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները:

Առաջադրված թեկնածուի համար կազմակերպության մասնագիտական ուղղվածությամբ համապատասխան գիտական աստիճանի առկայությունը պարտադիր է:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում

2. Լուսանկար

3. Քաղվածք աշխատանքային գրքույկից

4. Ինքնակենսագրություն

5. Բարձրագույն կրթության, գիտական աստիճանի և գիտական կոչման դիպլոմների պատճենները

6. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ

7. Գիտական աշխատությունների ցուցակ

8. Բնութագիր աշխատավայրից:

Թեկնածուի հիմնավորված առաջադրումը վերոնշյալ փաստաթղթերի հետ միասին 30 օրվա ընթացքում (հայտարարության հրապարակման օրվանից) խնդրվում է ներկայացնել ՀՀ ԳԱԱ ՕԴԲ ԳՏԿ գիտքարտուղարին հետևյալ հասցեով:

0014, Երևան, Ազատության 26, հեռ. 28-52-91

ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 21.12.2021 թ.:

"ГИТУТИОН" ("Hayka") gazeta HAH PA